

ՄՈՍԿՎԱՅԻ Մ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

<< >> _____ 2018թ.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VII դասարան)

Անուն հայրանուն ազգանուն _____

Ստուգման արդյունքներ

Առաջադրանք	միավոր		Առաջադրանք	միավոր
1)			11)	
2)			12)	
3)			13)	
4)			14)	
5)			15)	
6)			16)	
7)			17)	
8)			18)	
9)			19)	
10)			20)	
			ԸՆԴԱՄԵՆՆԸ՝	

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ստուգեց՝

Ս.Ռ. Համբարձումյան

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Հարգելի դիմորդ

«Մաթեմատիկա» առարկայի ընդունելության թեստը բաղկացած է 20 առաջադրանքից:

1–15-ը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են՝ նպատակաուղղված աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրի նվազագույն պահանջներին: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը:

16 - 20-ը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո՝ նշված տեղում:

1 – 15 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

16 – 20 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 4 միավոր:

Թեստի առավելագույն գնահատականը 50 միավորն է:

Թեստի առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

Մաղթում ենք հաջողություն

Թեստ 7-2 (VII դասարան)

ՄԱՍ I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-15)

1. Ո՞ր թիվը պետք է գումարել $2\frac{2}{3}$ -ին, որպեսզի ստացվի $7\frac{8}{9}$:

1) $5\frac{2}{9}$

2) $5\frac{1}{9}$

3) $5\frac{4}{9}$

4) $4\frac{2}{3}$:

2. Գտնել ամենամեծ երկնիշ և ամենափոքր քառանիշ թվերի գումարը:

1) 1098

2) 1100

3) 1099

4) 1097

3. m -ի հ^օնչ արժեքի դեպքում է $(2m+1)$ արտահայտության արժեքը 8-ով մեծ $(m+7)$ արտահայտության արժեքից:

1) 14

2) 13

3) 15

4) 30

4. 27 սմ 8 մմ ինչքանով է մեծ 138 մմ-ից:

1) 13սմ 7 մմ

2) 14սմ 8 մմ

3) 14 սմ

4) 7 մմ

5. Որքան է կազմում տոննայի $\frac{27}{100}$ մասը:

1) 27 կգ

2) 2 ց 7կգ

3) 2ց 70 կգ

4) 20 ց 70 կգ

6. Ո՞ր թվանշանով է վերջանում 5-ի վրա բաժանվող կենս թիվը:

1) 3

2) 0

3) 5

4) 7

7. Որքանով է 1-ից տարբեր յուրաքանչյուր բնական թվի հաջորդ թիվը մեծ այդ բնական թվի նախորդ թվից:

1) 2

2) 1

3) 3

4) 0

8. Գտնել 20-ից փոքր բոլոր կենս երկնիշ թվերի գումարը:

1) 95

2) 65

3) 85

4) 75

9. 1 մետրի քանի՞ տոկոսն է 1 դեցիմետրը:

- 1) 1 2) 10 3) 11 4) 15

10. 100 կգ ծովաջուրը պարունակում է 15 կգ աղ: Քանի՞ տոկոս է ջուրը ծովաջրում:

- 1) 35% 2) 85% 3) 15% 4) 25%

(11-12) Գտնել արտահայտության արժեքը:

11.
$$\frac{\left(4\frac{3}{10}\right)\left(-2\frac{41}{50}\right)}{\left(-2\frac{1}{70}\right)\left(1\frac{18}{25}\right)}$$

1) $\frac{15}{10}$ 2) $\frac{25}{10}$ 3) $\frac{35}{10}$ 4) $\frac{45}{10}$

12.
$$|-50| + |-4|$$

1) -54 2) 54 3) 46 4) -46

(13-15) Հավասարումներ և անհավասարումներ:

13.
$$2 \cdot (x + 3) = 6 - x$$

1) -1 2) 1 3) 0 4) 2

14.
$$\frac{2}{3} \cdot (3x - 5) = 6 + x$$

1) $9\frac{1}{3}$ 2) 1 3) 0 4) 3

15. Գտնել բոլոր բնական թվերի գումարը, որոնք $1\frac{2}{3} < x < 5\frac{4}{7}$ անհավասարման լուծումներն են:

- 1) 15 2) 14 3) 10 4) 7

ՄԱՍ II. Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ (16-20)

(16-20) *Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:*

16. Խորանարդի բոլոր կողերի երկարությունների գումարը 132 սմ է: Գտնել նրա ծավալը:

Պատ.՝-----

17. Ինքնաթիռը երկու քաղաքների միջև եղած հեռավորությունն անցել է 3 ժ 20 ր-ում: Եթե ինքնաթիռի արագությունը 200 կմ/ժ-ով ավելին լիներ, ապա նույն հեռավորությունը այն կանցներ 2ժ 30 ր-ում: Որքա՞ն էին ինքնաթիռի արագությունը և քաղաքների հեռավորությունը

Պատ.՝-----

18. Երկու վարպետներ, աշխատելով առանձին, կարող են կատարել նույն աշխատանքը համապատասխանաբար 10 և 12 օրում: Աշխատանքի n ր մասը կկատարեն վարպետները՝ մեկ օր աշխատելով միասին:

Պատ.՝-----

19. Մի քաղաքից մյուսը միաժամանակ ուղևորվեցին երկու մեքենաներ. առաջինի արագությունը 85 կմ/ժ էր, երկրորդինը՝ 70 կմ/ժ: Երբ առաջին մեքենան տեղ հասավ, երկրորդին մնում էր անցնելու 30 կմ: Գտնել քաղաքների հեռավորությունը

Պատ.՝ -----

20. Մետաղե ձողի երկարությունը 0° ջերմության դեպքում 1,5մ է, իսկ 100° ջերմության դեպքում դառնում է 1,71 մ: Քանի՞ տոկոսով է երկարում ձողը ջերմաստիճանը 1° -ով բարձրացնելիս

Պատ.՝ -----

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ս.Ռ. Համբարձումյան

Մնագրություն